

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԾԱԽՍԵՐԻ ԵՏԳՆՄԱՆ  
ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՆՈՐԱՅՐ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Ինչպե՞ս տարբեր գոտիներում աշխատող ձեռնարկությունների վերարտադրության պայմանների համահարթումը և զարգացման շատ թե՛ քիչ հավասար հնարավորությունների ապահովումը ՍՄԿԿ տնտեսական ստրատեգիայի ծրագրային խնդիրներից է, որը միաժամանակ առնչվում է գյուղի և քաղաքի սոցիալ-տնտեսական տարբերությունների հաղթահարման հետ:

ՍՄԿԿ XXVI համագումարում՝ ընդունված ծրագրային փաստաթղթերում առանձին ուշադրություն է դարձված երկրի էկոնոմիկայի կառավարման և տնտեսական մեխանիզմի կատարելագործման հարցերին՝ որպես հասարակական արտադրության աճի և նրա արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայմանի: Գյուղատնտեսության հարցում «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններում» պահանջվում է «Իրականացնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների պլանավորման, տնտեսական խթանման բարելավման, տնտեսական հաշվարկի ամրապնդման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, գյուղատնտեսական արտադրության շահութաբերության բարձրացման և տնտեսությունների ֆինանսա-տնտեսական վիճակի բարելավման միջոցառումների սխեման»<sup>1</sup>:

Տնտեսական մեխանիզմի պրոբլեմին առանձին ուշադրություն նվիրեց ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումը: Պլենումը մասնավորապես նշեց, որ այդ մեխանիզմի կատարելագործումը պարենային ծրագրի իրագործման անհրաժեշտ պայմանն է, գյուղատնտեսության արտադրողական ուժերի արագ զարգացումն ապահովող հիմնական միջոցը:

Պետության և գյուղատնտեսական ձեռնարկությունների տնտեսական հարաբերությունների ընդհանուր հաշվեկշռի մեջ վճռական նշանակություն ունի արտադրանքի մթերումների և մթերման գների համակարգը: Հենց այդ կապակցությամբ էլ անհրաժեշտ է ամենից առաջ քննարկել գնագոյացման և մթերագների գոյություն ունեցող պրակտիկայի կատարելագործման հարցը: Գնագոյացման գործող համակարգի կատարելագործման արմատական հարցը, կարելի է ասել հարցերի հարցը, գների մերձեցումն է ապրանքի արժեքին կամ արտադրության և իրացման հանրորեն անհրաժեշտ ծախսերին: Հայտնի է, որ արժեքի հաշվարկը վիճակագրական մարմինների կողմից դեռևս չի տրվում, իսկ գիտական գրականության մեջ առաջադրվել են արժեքի հաշվարկման մի քանի եղանակներ: Ուստի և ավելի մատչելի ու միաժամանակ գործնական է գործող մթերագները համեմատել համապատասխան ապրանքների ինքնարժեքի հետ, որի մասին վիճակագրությունն ավելի ստույգ տեղեկություններ է տալիս:

Բերենք մի քանի տվյալներ, որոնք ցույց են տալիս Հայկական ՍՍՀ

<sup>1</sup> «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 264:

և ՍՍՀՄ հանրային գյուղատնտեսության ծախսերի և ստացած միջոցների հարաբերակցությունը վերջին 15 տարիների ընթացքում:

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, մեր հանրապետության հանրային գյուղատնտեսական ձեռնարկությունները 1980 թ. ապրանքային արտադրանքի իրացումից 2,7 անգամ շատ դրամական միջոցներ են ստացել, քան 1965 թ., սակայն այդ ընթացքում ապրանքային արտադրանքի վրա կատարած ծախսերն աճել են 3,04 անգամ, այսինքն ավելի մեծ չափերով:

Աղյուսակ № 1

Կուտնտնությունների և սովխոզների կողմից պետությանը վաճառված գյուղատնտեսական արտադրանքի ծախսերը և իրացված դրամական միջոցները (համապատասխան տարիների ընթացիկ փաստացի գներով)<sup>2</sup>

| Ցուցանիշներ                                    | 1965  | 1980  | Խնդիր (շաբթ) |
|------------------------------------------------|-------|-------|--------------|
| <b>Հայկական ՍՍՀ</b>                            |       |       |              |
| ապրանքային արտադրանքի ծախսերը (մլն ռ.)         | 175,9 | 535,4 | 3,04         |
| իրացված դրամական միջոցները »                   | 205,6 | 555,2 | 2,7          |
| հտգնում (%)                                    | 1,17  | 1,04  | —            |
| գյուղատնտեսության համախառն արտադրանքը, 1973 թ. |       |       |              |
| համադրելի գներով (մլն ռ.)                      | 314,3 | 521,2 | 1,66         |
| <b>ՍՍՀՄ</b>                                    |       |       |              |
| ապրանքային արտադրանքի ծախսերը (մլրդ. ռ.)       | 21,1  | 64,5  | 3,05         |
| իրացված դրամական միջոցները »                   | 26,3  | 67,8  | 2,58         |
| հտգնում (%)                                    | 1,24  | 1,05  | —            |
| գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1973 թ.  |       |       |              |
| համադրելի գներով (մլրդ ռ.)                     | 56,1  | 86    | 1,53         |

№ 1 աղյուսակից հետևում է, որ պատկերը նույնն է նաև ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ գյուղատնտեսության մեջ: Դա վկայում է այն մասին, որ հանրային գյուղատնտեսության ծախսերի և եկամուտների հարաբերակցության նման անբարենպաստ շարժի միտումը ոչ թե տեղական, այլ ընդհանուր բնույթ է կրում:

Հանրային տնտեսության ծախսերի ավելացումը կապված է եղել ոչ միայն գյուղին մատակարարված արդյունաբերական ապրանքների գների բարձրացման, այլև գյուղատնտեսության աշխատողների վարձատրության

2 Աղյուսակը հաշվարկված է ՍՍՀՄ գների և գնագոյացման գիտահետազոտական ինստիտուտի (ԳՀԻ) տվյալների հիման վրա: 1964—1970 թթ. տեղի ունեցավ պետական մթերման գների զգալի բարձրացում՝ գործնականում գյուղատնտեսական բոլոր հիմնական արտադրատեսակների գծով, ՍՍՀՄ գների և դնագոյացման ԳՀԻ տվյալներով 1970 թ. գյուղատնտեսական մթերագների միջին ինդեքսը, 1964 թ. նկատմամբ, կազմեց 1,42 (այդ թվում բուսական մթերքների գծով 1,29, անասնաբուծական մթերքների՝ 1,61):

Հաջորդ տասնամյակում գյուղատնտեսական արտադրանքի մթերագները դարձյալ շարունակվում էին բարձրանալ: Սակայն դրա հետ մեկտեղ նշված տարիներին զգալի չափով բարձրացել են գյուղին վաճառվող արդյունաբերական ապրանքների, հատկապես գյուղատնտեսական տեխնիկայի, վառելանյութի, շինանյութերի, կերերի և այլնի գները. դա անխուսափելիորեն պետք է անդրադառնա գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի բարձրացման վրա: Այս հանգամանքն ինքնին զգալի չափով «չեզոքացրել», նվազագույնի է հասցրել այն դրական ազդեցությունը, որը կապված էր մթերագների բարձրացման հետ:

բարձրացման հետ: Այսպես թե այնպես, հանրային տնտեսության ծախսերն ավելի արագ աճի միտում են դրսևորում, քան նրա իրացրած դրամական միջոցները: Ինչ խոսք, որ դրա հետևանքով հանրային տնտեսության ծախսերի նստվածքն աստիճանաբար պետք է անխուսափելիորեն նվազեր: Առանձնապես ցածր է անասնապահական արտադրանքի վրա կատարվող ծախսերի հոգնման վիճակը: Այսպես, օրինակ, 1985 թ. հանրապետության կոլտնտեսությունները և սովխոզներն անասնապահական արտադրանքի պետական մթերումներից (վաճառքից) իրացրել են 82,3 մլն ռ., մինչդեռ դրա ինքնարժեքը կազմել է 90,8 մլն ռ., ուրեմն՝ վնասը կազմել է 8,5 մլն ռ.: 1980 թ. հանրային անասնապահության արտադրանքի իրացումից ստացվեց 311,5 մլն ռ., մինչդեռ ինքնարժեքը կազմել է 324,5 մլն ռ., կամ վնասը եղել է 13 մլն ռ.<sup>3</sup>: Հարկ չկա ապացուցելու, որ անասնապահության վնասաբերությունը պայմանավորված է եղել ամենից առաջ այդ ճյուղի արտադրանքի գնագոյացման թերություններով:

ՍՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումի որոշումներում մասնավորապես նշվեց, որ գնման գները չեն համապատասխանում արտադրության անհրաժեշտ ծախսերին, որը և հանգեցրեց գյուղատնտեսական արտադրանքի զարգացման տեմպերի դանդաղեցմանը: Պլենումում նշվեց, որ «շատ կոլտնտեսություններ և սովխոզներ աշխատում են վնասով: Նրանք վնասով են իրացնում միսը, կաթը, և անասնապահական արտադրանքի այլ տեսակներ: Նման իրավիճակի պատճառները տարբեր են: Բայց հետևանքը մեկն է: Գինը, շահույթը, վարկը կորցնում են տնտեսական լծակների իրենց դերը, չեն խթանում արտադրության աճը»<sup>4</sup>: Պլենումի որոշմամբ, 1983 թ. հունվարի մեկից բարձրացվում են խոշոր եղջերավոր անասունների, խոզի, ոչխարի մսի, կաթի, հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բանջարեղենի և մի քանի այլ մթերքների գնման գները: Հատկանշական է, որ գների մակարդակի ընդհանուր բարձրացման հետ մեկտեղ կիրառվելու են գների հավելումներ այն արտադրանքի նկատմամբ, որն արտադրվում է ավելի վատ պայմաններում, վնասով աշխատող, ցածր շահութաբեր տնտեսություններում: Պետք է ասել, որ գնագոյացման տեսությունը վաղուց ի վեր ապացուցել է, որ գյուղատնտեսության մեջ արժեքի և գների հիմքում ընկած են ոչ թե միջին, այլ վատթարագույն պայմաններում կատարվող ծախսերը: Այս դրույթն այժմ վերջապես գործնական ճանաչում է ստանում և, ինչ խոսք, առաջընթաց քայլ է գնագոյացման առօրյան գիտության պահանջներին մոտեցնելու տեսակետից: Այս նույն տեսակետից կարևոր է նաև մեկ այլ միջոցառում. պետությունն իր վրա է վերցնում նաև վատ պայմաններում աշխատող, թույլ կոլտնտեսությունների ոչ արտադրական ծախսերի (բնակարանային շինարարության, մանկական հիմնարկների, ակումբների, կուլտուր-կենցաղային օբյեկտների, ճանապարհաշինության և այլն) ֆինանսավորումը: Վերջապես, թույլ կոլտնտեսությունների ֆինանսական վիճակի բարելավման համար դուրս են գրվում բանկային վարկերի գծով առաջացած զգալի պարտքերը: Պետության ֆինանսատնտեսական վերահիշյալ միջոցառումների իրականացումը 29,5 մլրդ ռուբլով կավելացնի երկրի հանրային գյուղատնտեսության մուտքերը: Եթե նույնիսկ մի կողմ թողնենք պարտքերի դուրսգրումը (9,7 մլրդ ռ.), ապա հանրային գյուղատնտեսության դրամական միջոցների (մուտքերի) անմիջական հավելումը կկազմի 19,3 մլրդ ռ.: Համեմատության համար նշենք, որ № 1 աղյուսակի տվյալների համաձայն, ՍՄՀՄ կոլտնտեսությունների և սովխոզների դրամական միջոցները 1980 թ. կազմեցին 67,8 մլրդ ռ.: Պայմանականորեն այս երկու թվերը կարելի է գումարել միմյանց (67,8+19,3=87,1 մլրդ ռ.): Կատանանք հանրային տնտեսություն-

<sup>3</sup> Հաշվարկները կատարված են նույն ինստիտուտի տվյալների հիման վրա:

<sup>4</sup> «ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թվականի մայիսյան պլենումի նյութերը», Երևան, 1982, էջ 22:

նից սպասվող դրամական միջոցների մոտավոր գումարն առաջիկա տարիներին, օրինակ, 1983 թ.՝ Եթե հանրային տնտեսության ծախսերը մնան անփոփոխ, այսինքն 1980 թ. մակարդակին (64,5 մլրդ ռ.), այդ դեպքում նրա շահութաբերությունը կկազմի՝ 
$$\frac{87.1.100}{64,5} = 35\%$$
 ներկայիս 5%-ի դիմաց

(տե՛ս աղյուսակ № 1)։ Իհարկե, այս հաշվարկը մոտավոր է և պայմանական, քանի որ նրա մեջ մտնող հիմնական գործոնները (հանրային տնտեսության արդյունքը և ծախսերը) իրականում ոչ թե անփոփոխ են լինելու, ինչպես ենթադրվում է վերոհիշյալ հաշվարկում, այլ ենթակա են փոփոխության։ Այդուհանդերձ, կասկած չկա, որ ՍՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլանումի ձեռնարկած միջոցառումները զգալի չափով կավելացնեն հանրային տնտեսության եկամուտները, իսկ դա նշանակում է, որ համապատասխանորեն կբարելավվի նաև գյուղատնտեսության ծախսերի և եկամուտների ներկայիս անբարենպաստ հարաբերակցությունը։

Տնտեսագիտական դրականության մեջ տարածված է այն տեսակետը, որ գյուղատնտեսական արտադրանքի մթերագների կատարելագործումը պետք է ընթանա դրանց հետագա գոտիական տարբերացման (շերտավորման) ուղիով, այսինքն պետք է այնպես անել, որ մթերագների գոտիական տարբերացումն է՛լ ավելի խորացվի և համապատասխանեցվի արտադրանքի ինքնարժեքի տարբերացմանը՝ ըստ գյուղատնտեսական գոտիների։

Այժմ տեսնենք, թե մթերագների տարբերացումը որքանով է ձերկնում գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի տարբերացումը։ Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ գյուղատնտեսական արտադրանքի փաստացի մթերագների տարբերացումն ըստ երկրի գյուղատնտեսության լավագույն և վատագույն գոտիների, այսօր զգալիորեն ավելի մեղմ է արտահայտված, քան ինքնարժեքի տարբերացումը։ Դա կարելի է տեսնել երկրագործության երեք հիմնական կուլտուրաների օրինակով (տե՛ս աղյուսակ № 2)։

Ինչպես երևում է № 2 աղյուսակից, հացահատիկի ինքնարժեքը երկրի վատագույն գոտում 5,7 անգամ ավելի է լավագույն գոտու համեմատ, մինչդեռ մթերագնի տատանումը նույն գոտիներում ընդամենը 2,7 անգամ է։ Կարտոֆիլի ինքնարժեքի տատանումները 3,9 անգամ են, իսկ մթերագներինը՝ 1,8։ Խաղողի ինքնարժեքը Հայաստանում 1,9 անգամ բարձր է, քան Մոլդավիայում, մինչդեռ մթերագնի տարբերությունը չի անցնում 40%-ից։

Մթերագների տնտեսական հիմնավորվածությունը գնահատելու համար հաշվարկել ենք նաև վերոհիշյալ ճյուղերի արտադրանքի անհատական արժեքը։ Հայտնի է, որ գների հիմքում ընկած է համապատասխան ապրանքի հասարակական արժեքը, ընդ որում, խոսքն այստեղ ապրանքների վերջնական սպառողական գների մասին է։ Ինչ վերաբերում է գյուղատնտեսական արտադրանքի մթերագներին (որ մեծածախ գների տարատեսակն են), ապա դրանց հիմքում օբյեկտիվորեն ընկած է արտադրանքի անհատական արժեքը, այլ կերպ ասած միջին ճյուղային արժեքը։ Վերջինս գոյանում է միջին ճյուղային ինքնարժեքի և շահութաբերության որոշակի միջին մակարդակի հիման վրա (տե՛ս աղյուսակ № 2)։ Այդ աղյուսակից դժվար չէ նկատել, որ հացահատիկի շահութաբերությունը երկրի սովխոզներում բավական բարձր է։ Հնչ։ որում, այս արտադրանքի փաստացի մթերագինը գերազանցում է անհատական արժեքին, որն ինչ խոսք, վատ չէ այս հիմնական ճյուղի զարգացումը խթանելու տեսակետից։

Ինչ վերաբերում է խաղողին, ապա դրա շահութաբերությունը երկրի սովխոզներում զգալիորեն զիջում է հացահատիկին, իսկ մթերագինը՝ նրա անհատական արժեքին (360 և 438 ռ.), մի հանգամանք, որը բնավ չի կարող խթանել այդ արժեքավոր կուլտուրայի զարգացումը։ Խաղողի շահութաբերությունը ցածր է նաև Հայկական ՍՍՀ-ում։ Մինչդեռ հայտնի է, որ հայկական խաղողն իր որակով, որպես սննդարդյունաբերության հումք, բարի համ-

բավ է վայելում Միության մեջ: Սակայն այս ճյուղի զարգացումն ընթանում է ամենևին էլ ոչ դյուրին բնական պայմաններում, որն արտահայտվում է նրա բարձր աշխատատարության և ինքնարժեքի մեջ: Ինչպես ցույց են տալիս բազմամյա վիճակագրական տվյալները, մեկ տոննա խաղողի ինքնարժեքը մեր հանրապետությունում ամենաբարձրն է միութենական մյուս հանրապետությունների համեմատ (տե՛ս աղյուսակ № 2): Ասվածից նաև այն

Աղյուսակ № 2

Գյուղատնտեսական երեք կուլտուրաների արտադրանքի փաստացի ետզնումը (շահութաբերությունը) և անհատական արժեքը ՍՍՀՄ սովետիներում<sup>5</sup>

| Ցուցանիշներ                   | Փաստացի ցուցանիշներ <sup>6</sup> |                  |                          | Անհատական արժեքը (մեկ տոննայի համար) |
|-------------------------------|----------------------------------|------------------|--------------------------|--------------------------------------|
|                               | 1 տոննայի ինքնարժեքը ռուբլի      | գնման գին ռուբլի | ետզնում (շահութաբերունք) |                                      |
| <b>Հացահատիկ</b>              |                                  |                  |                          |                                      |
| միջինը ՍՍՀՄ-ում               | 71                               | 112              | 1,58                     | 106                                  |
| վատագույն դոտում (Թուրքմենիա) | 295                              | 271              | 0,92                     | 442                                  |
| լավագույն դոտում (Ուկրաինա)   | 52                               | 99               | 1,9                      | 78                                   |
| <b>Կարտոֆիլ</b>               |                                  |                  |                          |                                      |
| միջինը ՍՍՀՄ-ում               | 120                              | 143              | 1,19                     | 180                                  |
| վատագույն դոտում (Թուրքմենիա) | 295                              | 219              | 0,74                     | 442                                  |
| լավագույն դոտում (Բելոռուսիա) | 75                               | 120              | 1,6                      | 112                                  |
| <b>Խաղող</b>                  |                                  |                  |                          |                                      |
| միջինը ՍՍՀՄ-ում               | 292                              | 360              | 1,23                     | 438                                  |
| վատագույն դոտում (Հայաստան)   | 364                              | 447              | 1,23                     | 546                                  |
| լավագույն դոտում (Մոլդավիա)   | 193                              | 318              | 1,65                     | 290                                  |

եզրակացությունն է բխում, որ գյուղատնտեսական մյուս հիմնական ճյուղերի արտադրանքի մթերագների նման խաղողի մթերագները ևս էական կատարելագործման, բարձրացման կարիք են զգում: № 2 աղյուսակում բերված տվյալները հիմք են տալիս պնդելու, որ խաղողի նորմալ շահութաբերությունն ապահովելու համար նրա մեկ տոննայի մթերագինը հանրային սեկտորի համար պետք է լինի առնվազն 550 ռ., որը կապահովի այս ճյուղի զարգացման համար անհրաժեշտ կուտակումներ<sup>8</sup>:

5 Հաշվարկված է ՍՍՀՄ գների և փնագրացման համամիութենական ԳԶԻ տվյալների հիման վրա:

6 Վերցված են 1978—1980 թթ. միջին տարեկան փաստացի ինքնարժեքը և 1980 թ. գործող փաստացի մթերադինը:

7 Արտադրանքի միջին ճյուղային կամ անհատական արժեքը հաշվարկված է որպես ինքնարժեքի և օպտիմալ զուտ եկամտի գումար, վերջինս ընդունելով 50% շահութաբերության չափով:

8 Ինչ վերաբերում է գյուղի բնակչության անհատական սեկտորում արտադրվող խաղողին, ապա դրա մթերագինը պետք է ավելի բարձր լինի, որը պայմանավորված է այդ սեկտորի արտադրանքի ավելի բարձր ինքնարժեքով: Դա հաստատվում է նաև հարևան վրացական ՍՍՀ-ի օրինակով, որտեղ 1 տ խաղողի մթերագինն անցնում է 500 ռուբլուց հանրային սեկտորում, իսկ անհատական սեկտորում՝ 700—1000 ռ.:

Ժողովրդական տնտեսության ժամանակակից տեղաշարժերը, մի կողմից տրանսպորտի, կապի և հաղորդակցության միջոցների բուռն զարգացումը, մյուս կողմից՝ կոլեկտիվ և պետական ձեռնարկությունների աշխատավորների վարձատրության և սոցիալական ապահովման պայմանների մերձեցումն անխուսափելի ազդեցություն են գործում նաև գյուղատնտեսական արտադրանքի արժեզրույացման պրոցեսների վրա: Արտադրանքի անհատական արժեքներն ավելի ու ավելի մեծ չափով են ենթարկվում դրանց միասնական հասարակական արժեքի գոյացման միտումներին: Անհատական ինքնարժեքի հիման վրա սահմանված մթերագները չեն խրախուսում գյուղատնտեսության մասնագիտացումը և ճիշտ տեղաբաշխումը, այլ, ընդհակառակը, ըստ էության պահպանում, «հավերժացնում» են այս ասպարեզում այժմ գոյություն ունեցող ունիվերսալիզմը, բազմաճյուղայնությունը: Մթերագների գոտիական տարբերացման պրակտիկան չնայած շարունակում է գործել, սակայն, միաժամանակ, տեղի է ունենում այդ գների ընդհանուր մակարդակի բարձրացում և մերձեցում արտադրանքի հասարակական ծախսերին, արժեքին: Ընդ որում, գյուղատնտեսական արտադրանքի հասարակական դնի և արժեքի հիմքում ընկած են ոչ թե արտադրության միջին ծախսերը (ինքնարժեքը), այլ վատթարագույն բնատնտեսական պայմաններում կատարվող ծախսերը: Այդ են վկայում ոչ միայն տեսական նկատառումները, այլև գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման այն միտումները, որոնք պարզորոշ ուղղագծվել են վերջին 2—3 տասնամյակի ընթացքում: Իսկապես, նշված ժամանակաշրջանում գյուղատնտեսական արտադրանքի գները, այդ թվում և մթերագները, անընդհատ բարձրացել են և շարունակում են բարձրանալ: Դա բացատրվում է երկու հիմնական պատճառներով, որոնցից առաջինը, ինչպես վերը նշեցինք, արտադրանքի ծախսերի (ինքնարժեքի) բարձրացումն է: Երկրորդ հիմնական շարժառիթն այն է, որ դներն աստիճանաբար մերձենում են վատթարագույն գոտիներում կատարվող ծախսերին:

Ներկայումս գյուղատնտեսական արտադրանքի չնչին մասի մթերագներն են հատուցում վատթարագույն գոտիների ծախսերը (հացահատիկ, որոշ տեխնիկական կուլտուրաներ): Բուսաբուծության արտադրանքի մեծագույն մասի գները հատուցում են միջին ճյուղային ծախսերը, իսկ անասնապահական արտադրանքի գները, ինչպես տեսանք, չեն հատուցում նաև այդ ծախսերը, այսինքն՝ գործող մթերագները հաճախ ինքնարժեքից էլ ցածր են: Ուստի և հանրային տնտեսության ընդհանուր արդյունքում գոյանում են հարաբերական կամ բացարձակ վնասներ: Դա վերաբերում է և՛ ՍՍՀՄ-ի, և՛ մեր հանրապետության արդի վիճակին: Այդ վնասների պրոբլեմի ամենաընդհանուր քանակական տեսքը մեր հանրապետության գյուղատնտեսության հանրային սեկտորում երևում է № 3 աղյուսակից:

Ինչպես երևում է № 3 աղյուսակից, հանրապետության կոյտնտեսային և պետական սեկտորները բուսաբուծության արտադրանքի իրացումից (վաճառքից) ստացել են 39,6 մլն ռ. օգուտ, որը կազմում է 25% շահութաբերություն, իսկ անասնապահությունից ընդհակառակը՝ գոյացել են վնասներ (6,6 մլն ռ.): Ո՞րքան միջոցներ են անհրաժեշտ հանրային տնտեսության այդ երկու ճյուղերի նորմալ զարգացման համար: Այդ հարցին է պատասխանում № 3 աղյուսակի երկրորդ մասում բերված հաշվարկը: Այդ հաշվարկը կատարված է երկու տարբերակով: Առաջին տարբերակը ենթադրում է գյուղատնտեսական արտադրանքի պետական մթերագներին սահմանումն ապրանքի անհատական արժեքի մակարդակով, որը, ինչպես արդեն պարզեցինք, օբյեկտիվորեն ընկած է մթերման գների հիմքում, ուստի և դրանց կարգավորման չա-

փանիշը պետք է հանդիսանա<sup>9</sup>, երկրորդ տարբերակը հիմնված է հանրային տնտեսության օպտիմալ շահութաբերության ընդհանուր ճանաչում գտած դադափարի վրա, որը տվյալ դեպքում ընդունել ենք բուսաբուծության ճյուղերի համար 50, իսկ անասնապահության համար՝ 25%: Ինչու ենք անասնապահության համար շահութաբերության նորմատիվն ավելի ցածր վերցրել, քան բուսաբուծության: Բանն այն է, որ հանրային անասնապահության

Ա Ղ յ ու ս ա կ № 3

Հայկական ՍՍՀ հանրային գյուղատնտեսության փաստացի և անհրաժեշտ զուտ եկամտի հաշվարկ (1970—1978 թթ. միջին տվյալներով)<sup>10</sup>

| Ցուցանիշներ                                                                   | Բուսաբուծություն | Անասնապահություն | Ընդամենը |
|-------------------------------------------------------------------------------|------------------|------------------|----------|
| 1 ապրանքային արտադրանքի ինքնարժեքը (վլն ռ.)                                   | 150,2            | 246,8            | 397      |
| 2 դրանից իրացրած դրամական միջոցները (վլն ռ.)                                  | 198,8            | 240,2            | 439      |
| 3 զուտ եկամուտ (վնաս), (վլն ռ.)                                               | 39,6             | —6,6             | 33       |
| ծախսերի ետգնում (2 : 1)                                                       | 1,25             | 0,97             | 1,03     |
| 4 նորմալ դարգացման համար գյուղատնտեսությունը պետք է իրացնի դրամական միջոցներ. |                  |                  |          |
| ա) արտադրանքի անհատական արժեքի հաշվարկով (վլն ռ.)                             | 260,1            | 362,9            | 623      |
| բ) նորմալ շահութաբերության հաշվարկով (վլն ռ.)                                 | 225,3            | 308,5            | 533,8    |
| 5 պահանջվող լրացուցիչ միջոցներ (զոտացիա տ. 4—տ. 2)                            |                  |                  |          |
| ա) տարբերակով                                                                 | 61,3             | 122,7            | 184      |
| բ) տարբերակով                                                                 | 26,5             | 68,3             | 94,8     |

այսօրվա բարձր ժախսերը և աշխատանքի ցածր արտադրողականությունն օբյեկտիվորեն հնարավորություն չեն տալիս գնագոյացումը այդ ժախսերի մակարդակով կարգավորելու համար. դա կպահանջեր անասնապահական արտադրանքի մթերագների շեշտակի բարձրացում: Ուստի և ավելի հիմնավոր կլինի այդ գները սահմանել ոչ թե առավելագույն, այլ նվազագույն շահութաբերությանը համապատասխան: Վերջինս կարելի է ընդունել պետության կողմից սահմանված չհարկվող զուտ եկամտի չափով (25%), որը նույն իմաստն ունի և՛ կոլեկտիվ, և՛ անհատական տնտեսությունների համար:

Ինչպես երևում է № 3 աղյուսակից, հաշվարկի երկու տարբերակների տվյալների միջև զգալի տարբերություն կա. մի դեպքում գյուղատնտեսության հանրային սեկտորի պահանջվող զոտացիայի գումարը կազմում է 184 վլն ռ., մյուս դեպքում՝ շուրջ երկու անգամ պակաս: Այլ խոսքով, գյուղատնտեսական հանրային սեկտորի ապրանքային արտադրանքի մթերագները, դրանց անհատական արժեքի մակարդակով սահմանելու դեպքում, պետք է բարձրացվեն միջին հաշվով 42%-ով, իսկ նորմալ շահութաբերության ապահով-

<sup>9</sup> Անհատական արժեքը որոշել ենք բուսաբուծության 7 և անասնապահական 5 հիմնական արտադրատեսակների համար, որպես դրանց փաստացի ինքնարժեքի և աշխատանքի միջին-ճյուղային վարձատրության չափով (նորմատիվով) հավելյալ արտադրանքի գումար:

<sup>10</sup> Աղյուսակը հաշվարկված է ՀՍՍՀ կոլտնտեսությունների և սովխոզների համապատասխան տարիների տարեկան ամփոփ հաշվետվությունների տվյալների հիման վրա: Արժեքի հաշվարկման մեթոդիկայի մասին տե՛ս տեքստում: Դոտացիան որոշված է որպես հաշվարկային և փաստացի դրամական միջոցների տարբերություն:

ման դեպքում՝ 21: Ընդ որում, երկու գեպքում էլ առավել ակնհայտ է անասնապահական արտադրանքի մթերագների բարձրացման անհրաժեշտությունը (51 և 28% -ով):

Այսպիսով, գյուղատնտեսական արտադրանքի պետական մթերման (գնման) գների առաջիկա բարձրացումը միանգամայն արդարացված և հասունացած միջոցառում է, որը կպահանջի ազգային եկամտի որոշակի վերաբաշխում գյուղատնտեսության օգտին: Սակայն հարկ է ընդգծել, որ նման վերաբաշխումը ոչ մի դեպքում չի կարելի դիտել իբրև սոսկ վերաբաշխում կամ դոտացիա (օգնություն) գյուղատնտեսությանը: Մթերագների բարձրացումը և այդ նպատակով երկրի ազգային եկամտի վերաբաշխումն իրականում ոչ այլ ինչ է, եթե ոչ գյուղատնտեսության և արդյունաբերության, գյուղի և քաղաքի միջև համարժեքային փոխանակության սկզբունքի կենսագործում: Այս միտքը հաստատելու համար թերևս բավական է բերել մեկ օրինակ: Նշեցինք, որ ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մեր հանրապետության հանրային անասնապահությունն աշխատում է վնասով, չի ապահովում նույնիսկ կատարած ծախսերի ետգնումը: Միևնույն ժամանակ հանրահայտ է, որ մսի, կաթի արդյունաբերության մեջ իրացվում են մեծ եկամուտներ, շահութաբերությունն այստեղ տատանվում է 33-ից մինչև 50%: Այս իրավիճակը չի կարելի համակերպել համարժեքային փոխանակության սկզբունքի հետ: Համարժեքայնության ապահովումը ապրանքների փոխանակության ասպարեզում չի կարող արդյունավետ լինել, եթե այն չլրացվի արտադրության և սպառման ոլորտներում նույն սկզբունքի իրագործումով: Հասկանալի է, որ այս բարդ խնդիրը չի կարող լուծվել միայն ղեադրացման կարգավորմամբ, այն ստնչվում է մի շարք ուրիշ գործոնների և հանգամանքների հետ: Այդ գործոններից հատկապես կարևոր են գյուղատնտեսական արտադրանքի մթերման երկրի առաջադրանքի պլանավորումը և աշխատանքի վարձատրության համակարգի ճիշտ կարգավորումը, հարցեր, որոնցից պմեն մեկը, սակայն, առանձին ուսումնասիրության խնդիր է:

## ОБ ОКУПАЕМОСТИ ЗАТРАТ И СОВЕРШЕНСТВОВАНИИ ЦЕНООБРАЗОВАНИЯ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ

НОРАЙР МАНАСЕРЯН

### Резюме

Анализ многолетних данных свидетельствует о том, что окупаемость затрат колхозов и совхозов республики (как и страны в целом) за последние полтора десятилетия (1965—1980 гг.) имела тенденцию к снижению. Особенно неблагоприятно в этом отношении с окупаемостью животноводства. Как было отмечено на майском (1982 г.) Пленуме ЦК КПСС, подобное положение сдерживает развитие сельскохозяйственного производства—для преодоления его государством намечено новое значительное повышение заготовительных цен на с.-х. продукцию. При этом наряду с общим повышением уровня цен будут применены надбавки к ценам на продукцию, производимую в худших условиях производства, для малорентабельных и убыточных хозяйств, а также прямое финансирование этих хозяйств по линии непроизводственных капиталовложений (строительство клубов, школ, детских учреждений и т. д.).

В этих мероприятиях получает практическое признание и реализацию известное теоретическое положение о регулирующей роли худших условий производства в образовании стоимости и цены сельскохозяйственной продукции. Возмещение нормальных затрат и доходов хозяйствам худших зон есть важнейшее условие расширенного воспроизводства в этой отрасли народного хозяйства.